ԳԻՇԵՐ Է…

(Նեկրասովից)

Գիշեր է… Քընի ախորժանք չը կայ.
Սրտէն վայելած ամէն զուարճանք՝
Մենք աղօթելու պատրաստ ենք հիմայ,
Միայն չը գիտենք — ո՛ւմ ինչ ցանկանանք։

Ցանկա՛նք մենք նորա՛ն գիշեր բարեբեր,
Ով յանուն Փըրկչի համր է ու համբեր.
Ում գըժնեայ աչքից չեն հոսում արցունք,
Ով չէ տըրտընջում, միշտ փակ են շըրթունք.
Ո՛ւմ կոշտ ձեռքերը միշտ բա՛ն ու գո՛րծում,
Տալիս է հընար մեզ առօք-փառօք
Թաղուել արուեստի, գիտութեան ծոցում,
Սիրել արեան խաղ, յոյզ, ախի՛ն, բոլբոք…
Ով խաւարն ընկած անլոյս, անթափանց,
Անգիտակ — ինչ է իրաւունք, Աստուած,
Կեանքի շաւղումն է անղեկ տատանգում,
Որպէս անճըրագ ստորերկրեայ բանտում…

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ